Տեխնոլոգիա 3

Աշխատանքային գիրք-տետր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

**հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար**

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
«Տեխնոլոգիա 3» աշխատանքային գիրք-տետր /Օրդյան Ն.Ա., Օհանյան Հ.Վ., Պետրոսյան Ս.Ս.;
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 72 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա.Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.

Հեղինակներ՝
Օրդյան Նունե Ալբերտի, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օհանյան Հասմիկ Վրույրի
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Օրդյան Ն.Ա., Ստեփանյան Ա. Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN
ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի երեխաներ, առաջին և երկրորդ դասարաններում տեխնոլոգիայի դասերին դուք արդեն բավականին շատ գիտելիքներ ու հմտություններ եք ձեռք բերել: Դուք աշխատել եք բնական և արհեստական նյութերով, դրանցից գեղեցիկ իրեր եք պատրաստել: Երրորդ դասարանում դուք կշարունակեք աշխատել այդ նյութերով, ընկերներով միասին կհորինեք և կպատրաստեք գեղեցիկ ու օգտակար իրեր:

Դրա համար ձեզ անհրաժեշտ կլինեն հետևյալ ***նյութերը, գործիքներն ու պիտույքները.***

Ծեփոն

Գունավոր թուղթ

Բամբակ

Թելեր

Մկրատ

Սոսինձ

Հյութ խմելու ձողիկներ



Ասեղ

Թղթե ափսեներ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աշխատանք մատիտներով
- Աշխատանք սոսնձով
- Աշխատանք գունավոր թղթերով
- Աշխատանք ծեփոնով (պլաստիլինով)
- Աշխատանք սերմերով
- Աշխատանք մկրատով
- Աշխատանք հավելվածի կպչուն նյութերով
- Աշխատանք մանածագործական նյութերով
- Ուսումնասիրության նյութ
- Նշված տեղից սոսնձել
- Նշված տեղից թուղթը ծալել
- Նշված տեղից թուղթը կտրել

Առաջադրանք 1. Հավելված 1-ից ընտրիր համապատասխան հագուստ և «հագցրու» երեխաներին:

ա) Տարվա տարբեր եղանակներին:

ԳԱՐՈՒՆ





ԱՄԱՌ





ԱՇՈՒՆ





ՁՄԵՌ





բ) Տանը կամ դպրոցում:

ՏԱՆԸ





ԴՊՐՈՑՈՒՄ





Աշխատանք մանածագործական նյութերով

Թելերը կիրառվում են տարբեր նպատակներով:

Կարելու թել

Հյուսելու թել

Ասեղնագործելու թել



Պարան

Առաջադրանք 2

ա) Մի կտոր բամբակը ոլորելով՝ պատրաստիր բամբակյա թել:

բ) Մի քանի թելեր միմյանց հետ ոլորելով՝ պատրաստիր ավելի հաստ թել:

գ) Ընկերոջդ հետ 2 թել ոլորելով՝ ստացիր հաստ թել:

դ) 3 թելից հյուսիր պարան:



Առաջադրանք 3. Ուսումնասիրում ենք գործվածքի հատկությունները:

Որոշիր գործվածքի շիտակ և թարս կողմերը: Նայիր նկարում պատկերված գործվածքի կտորներին և նշիր շիտակ կողմը:



Առաջադրանք 4. Օրիգամի:

Երկրորդ դասարանում դուք պատրաստել եք պարզ օրիգամիներ՝ ծրար, եռանկյուն:
Այժմ կվերհիշենք դրանց պատրաստման հաջորդական քայլերը և կպատրաստենք այլ օրիգամիներ:

ա) Եռանկյուն

Քառակուսի թուղթը անկյունագծով ծալիր և ստացիր եռանկյուն:



բ) Օդապարիկ

Քառակուսի թուղթը ծալիր նկարում նշված տեղերից և ստացիր օդապարիկ:



գ) Ծաղկի կոկոն (բողբոջ)

Սկզբից անկյունագծով ծալելով ստացիր եռանկյուն, ապա նշված տեղերից ծալելով պատրաստիր կոկոն:



դ) Ծրար

Քառակուսի թուղթը չորս անկյուններից ծալիր դեպի ներս և ստացիր ծրար:



Առաջադրանք 5. Օրիգամի էջանշան:

Նկարում նշված հաջորդականությամբ պատրաստիր օրիգամի էջանշան:
Պատրաստի էջանշանը ձևավորիր քո նախընտրած ձևով՝ օգտվելով հավելվածից (Հավելված 2):



Առաջադրանք 6. Հավելվածից օգտվելով՝ պատրաստի՛ր նկարում պատկերված ապլիկացիան (Հավելված 3): Ի՞նչ երկրաչափական պատկերներից է այն պատրաստված: Վանդակներում նշի՛ր, թե յուրաքանչյուր պատկերից քանի՞ հատ կա:



ՇՐՋԱՆ



ՔԱՌԱՆԿՅՈՒՆ

ԵՌԱՆԿՅՈՒՆ



Առաջադրանք 7. Գունավոր թղթերից կտրի՛ր շրջաններ, պատրաստի՛ր թղթից ձկնիկներ և հաջորդ էջին պատկերված օվկիանոսի ետնապատկերի վրա հավաքի՛ր կոմպոզիցիան, ինչպես ցույց է տրված նկարում:



1) Յուրաքանչյուր ձկնիկի համար հարկավոր է երկու մեծ շրջան մարմնի համար և երկու փոքր շրջան պոչի համար:



2) Բոլոր շրջանները մեջտեղից ծալի՛ր:



3) Թղթե շրջանները մի կողմով սոսնձի՛ր նկարի նշված մասերում:



4) Ձկնիկի վրա կարող ես նկարել աչքեր և թեփուկներ:







Առաջադրանք 8. Քայլերի նշված հաջորդականությամբ թղթից պատրաստիր տարածական մրգեր (Հավելված 4):



1) Հավելվածի մրգերի ձևանմուշները փակցրու թղթի վրա և մկրատով եզրագծերով կտրիր:



2) Նշված մասերից ծալիր այնպես, ինչպես ցույց է տրված նկարում:



3) Հավելվածից առանձնացրո'ւ պոչը, մեջտեղից ծալիր և երկու կողմից ամրացրու մրգին այնպես, ինչպես ցույց է տրված նկարում:



4) Հավելվածից առանձնացրո'ւ տերևը, մեջտեղից ծալիր և երկու կողմից ամրացրու պոչին:

Առաջադրանք 9. Նայի՛ր օրինակին և գունավոր թղթերից պատրաստի՛ր հավիկ:

Քեզ հարկավոր են դեղին և կարմիր թղթեր, մատիտ, մկրատ, սոսինձ և բաժակ կամ այլ կլոր առարկա, որի օգնությամբ կարող ես շրջան գծել:



1



1) Դեղին թղթի վրա բաժակի կամ այլ կլոր առարկայի օգնությամբ շրջանագիծ գծիր և մկրատով եզրագծերով կտրիր:

2



2) Շրջանաձև կտրված թուղթը մեջտեղից ծալիր և երկու կողմերից մկրատով փոքր կտրվածքներ արա:

3



3) Մի կողմից կտրվածքի մեջ սոսնձիր կատարը և կտուցը, իսկ մյուս կողմից՝ պոչը:

4

4) Մատիտով նկարիր հավիկի աչքերը:

Առաջադրանք 10. Գունավոր թղթերից պատրաստիր խխունջներ:

1) Հաջորդ էջից մկրատով եզրագծով կտրիր տարբեր երկարություն ունեցող գունավոր ժապավենները:



2) Դրանցից ամենամեծը պահիր խխունջի մարմնի համար, իսկ մնացած 3-ի եզրերին մի փոքր սոսինձ քսիր և մեծից փոքր մի կողմից սոսնձիր միմյանց:



3) Սոսնձված թղթե ժապավենները ազատ կողմից հերթով շրջանաձև պտտիր և սոսնձիր:



4) Ամենամեծ ժապավենը մի ծայրից սոսնձիր այնպես, որ ձևավորվի խխունջի գլուխը: Մեջտեղում սոսնձիր գունավոր օղակները:







Առաջադրանք 11. Հաջորդ էջում նշված քայլերի հաջորդականությամբ և 31 էջի գծապատկերի օգնությամբ պատրաստիր օձ-շղթա:





1) Հաջորդ էջից մկրատով եզրագծով կտրի՛ր օձի առանձին մասնիկները:



2) Օձի մարմնի համար ժապավենները օղակաձև սոսնձի՛ր միմյանց և ստացի՛ր երկար շղթա: Դրա մի եզրից ամրացրո՛ւ գլուխը, իսկ մյուսից՝ պոչը:
Գլխի վրա սոսնձի՛ր լեզուն:



Առաջադրանք 12. «Ո՞վ որտեղ է ապրում»: Գունավոր մատիտներով ներկի՛ր բնության տարբեր վայրերի նկարները, հավելվածից ընտրի՛ր կենդանիների պատկերները և տեղադրի՛ր համապատասխան վայրում (Հավելված 5):

ՕՎԿԻԱՆՈՍ



ԱՆՏԱՌ

ԾԱՀԻԾ

ԱՆԱՊԱՏ



Առաջադրանք 13. Պատրաստիր ամանորյա տարածական դեկոր՝ քայլերի նշված հաջորդականությամբ:

1. Մկրատի օգնությամբ եզրագծով կտրիր հաջորդ էջի պատկերը, գունավոր մատիտներով կամ ներկերով ներկիր:

1



2. Վանդակապատ հատվածի վրա սոսինձ քսիր և ներքևի երկու հատվածները միմյանց սոսնձիր:

2

3. Մկրատով կտրիր տնակի մասերը, գունավորիր և սոսնձիր իրար:



4. Տնակը սոսնձիր տեսարանի վրա և ամբողջը ձևավորիր բամբակով:

Աշխատանք ծեփոնով և բնական նյութերով

Քանդակը կամ արձանը նման է մեծ, հատուկ խաղալիքի, որը պատրաստված է մարդու, կենդանու կամ իրի նման: Այն հաճախ պատրաստված է կոշտ նյութերից, ինչպիսիք են քարը, կավը, փայտը, մետաղը, ապակին: Արձանը քանդակելու կամ ձևավորելու համար վարպետներն օգտագործում են գործիքներ:

Մենք ունենք շատ հայտնի արձաններ, օրինակ Սասունցի Դավթի, Մարտիրոս Սարյանի և շատ հայտնի մարդկանց արձանները Երևանում, Գյումրիում և այլ քաղաքներում:

Քանդակագործը քանդակներ ստեղծող վարպետն է:

Քանդակները կարող են ստեղծվել տարբեր նյութերից, օրինակ՝ քարից, կավից, փայտից, մետաղից, ապակուց, ճենապակուց և այլն:

Առաջադրանք 14. Նայիր արձանների նկարներին և գծով միացրու այն նյութի անվանը, որից դրանք պատրաստվել են:



Քար

Փայտ

Կավ

Մետաղ



Ճենապակի

Առաջադրանք 15. Ծեփոնից պատրաստի՛ր կարապներ նշված հաջորդականությամբ:



1. Սեղանի վրա երկու ձեռքերով ծեփոնը գլորի՛ր այնքան, մինչև ստանաս երկար ծողեր:



2. Ստացված ծեփոնե ծողերը պարուրաձև ոլորի՛ր այնպես, ինչպես ցույց է տրված նկարում:





3. Ձևավորի՛ր կարապի պոչը, ավելացրու կտուց և աչքեր:

Առաջադրանք 16. Ծեփոնից և բնական նյութերից պատրաստիր տարբեր կենդանիներ կամ այլ հետաքրքիր իրեր: Կարող ես օգտվել նկարում բերված օրինակից:

ՈՋՆԻ

1

2

3

Առաջադրանք 17. Ծեփոնից պատրաստիր երկար ձողեր, այնուհետև դրանցից ձևավորիր կենդանիներ կամ մրգեր: Կարող ես օգտվել նկարներից կամ հորինել որևէ այլ բան քո երևակայությամբ: Քո պատրաստած պատկերները կարող ես տեղադրել դասարանի «Մեր ստեղծագործությունները» անկյունում:









Առաջադրանք 18. Գունավոր ծեփոնների օգնությամբ ձևավորի՛ր նկարված թխվածքները:

Առաջադրանք 19. Թղթե ափսեի վրա ասեղի օգնությամբ թելից «ծով» պատրաստիր և այնտեղ տեղադրիր տարբեր ջրային կենդանիներ (Հավելված 6):



Առաջադրանք 20. Խճանկար:

Պատրաստիր խճանկար հյութ խմելու ծողիկներից՝ դրանք ծեփոնով ամրացնելով նկարին:





Առաջադրանք 21. Պատրաստի՛ր թռչնաբույն և ամրացրու ծառի վրա (Հավելված 7):

1. Մկրատով կտրի՛ր հաջորդ էջի վրա պատկերված թռչնաբնի փռվածքը:

2. Գծապատված մասերին սոսինձ քսի՛ր և պատրաստի՛ր թռչնաբույն:



3. Ծառի վրա սոսնձով ամրացրո՛ւ քո պատրաստած թռչնաբույնը և հավելվածի թռչունները:





ԿԵՆՑԱՂ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

Առաջադրանք 22. Բնակարանի կահավորում (Հավելված 8):

1. Եզրագծերով կտրի՛ր 61-ից 67 էջերում պատկերված տարբեր սենյակների պատկերները:



2. Յուրաքանչյուր սենյակը ծալիր և սոսնձիր նշված տեղից:



3. Ստացված 4 սենյակները սոսնձիր միմյանց և հավաքիր բնակարան:



4. Հավելվածից ընտրիր համապատասխան կահույքը և տեղադրիր ճիշտ տեղերում:



5. Հավաքիր կահավորված բնակարան:



ԼՈԳԱՐԱՆ



ՀՅՈՒՐԱՍԵՆՅԱԿ



ԽՈՀԱՆՈՑ



ՆՆՔԱՍԵՆՅԱԿ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հավելված 1.

Հավելված 2.

Հավելված 3.



Հավելված 4.



Հավելված 5.







Հավելված 6.



Հավելված 7.



Հավելված 8.























Օրդյան Ն. Ա., Օհանյան Հ. Վ., Պետրոսյան Ս. Ս.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար**

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ. Մալյան 43